FB1520E#409-23/CB
08.08.2023թ.

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ պարոն՝ Մարտին Գալստյանին

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ Խորհրդի 2008թ.-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 4/04-ի 43-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի 2022թ.-ի տարեկան գործունեության հաշվետվությունը:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն-
Տնօրինության նախագահ՝ **Գարեգին Դարբինյան**

Կատարող՝ Արիաննա Մարայան
Հեռ. 010 51 00 00 (1515)

Internal

«ՖԱՍԹ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2022թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2022թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնես արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն:

Բանկի տնօրինության անդամները՝

Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահ		07.08.23
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աղասի Վարդանյան	Թվային բանկինգի տնօրեն, Տնօրինության անդամ		04.08.23
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սերգեյ Գասպարյան	Բիզնեսի կառավարման տնօրեն, Տնօրինության անդամ		04.08.23
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Թաթուլ Թամրազյան	Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ		04.08.23
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Լուսինե Սիմոնյան	Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2022թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2022 թվականի նոյեմբերի 9-ից հանդես է գալիս որպես «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ): Ընկերությունը հաշվետու տարվա ընթացքում գրանցել է դրական աճ՝ ավելացնելով ակտիվները և նվազեցնելով պարտավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 68,3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճելով մոտ 10 %-ով:

Բանկի ակտիվներում տեսակարար կշիռ են կազմում հաճախորդներին տրված վարկերը՝ մոտ 83 % : Վարկային պորտֆելը հաշվետու ժամանակահատվածում կազմում է 56.4 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ 3.2 մլրդ ՀՀ դրամով կազմում են ակտիվների 4.65 %-ը:

Հաշվետու տարում զգալի չափով նվազել են Բանկի պարտավորությունները՝ գրեթե 51 %-ով՝ կազմելով 19.6 մլրդ ՀՀ դրամ, որի 40 %-ը բաժին է ընկնում ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերին և փոխառություններին:

Նոյեմբերի 9-ից՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո, Բանկը վարում է նաև հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ընդունում ավանդներ, որոնք հաշվետու ժամանակահատվածում կազմել են ընդհանուր պարտավորությունների մոտ 3 %-ը:

31.12.2022 թ.-ի դրությամբ ընկերության թողարկած պարտքային արժեթղթերի պորտֆելը կազմել է մոտ 2.3 մլն ԱՄՆ դոլար և 500 մլն ՀՀ դրամ:

Բանկի կապիտալը նույն ժամանակահատվածում աճել է մոտ 26.5 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված կանոնադրական կապիտալի զգալի չափով համալրմամբ: Զուտ տոկոսային եկամուտը վարկային կորուստների գծով ծախսերի նվազեցումից հետո կազմում է ավելի քան 10 մլրդ ՀՀ դրամ ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը մոտ 3 մլրդ ՀՀ դրամով:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բանկի տոկոսային եկամուտները 2022թ.-ին աճել են մինչև 13.4 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է շուկայի մոտ 2.3%-ը: Զուտ տոկոսային եկամուտը դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել է 11 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով մոտավորապես 7%-ով:

Բանկի գործառնական եկամուտները 2021թ.-ի համեմատ աճել են 14,5%-ով: 31.12.22թ.-ի դրությամբ չաշխատող վարկերը (համաձայն ՀՀ ԿԲ ստանդարտների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) կազմել են Բանկի վարկային պորտֆելի 7.5%, որոնց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով:

Արդյունքում 2022թ.-ին Բանկն ունեցել է շուրջ 5.9 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Իսկ ակտիվների և կապիտալի շահութաբերությունը 2022թ.-ի վերջի դրությամբ կազմել է համապատասխանաբար ՝ 9 % և 16.66 %:

ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Ֆինանսական ոլորտում ունենալով ավելի քան 28 տարվա փորձ՝ բանկ դառնալու նպատակով, Ընկերությունը վերջին տարիների ընթացքում ակտիվորեն իրականացրել է լայնածավալ տրանսֆորմացիոն միջոցառումներ՝ ֆինանսական,

մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Դրա արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում շարունակել է աճել ընկերության աշխատակիցների քանակը՝ 31.12.2022թ.-ի դրությամբ հասնելով 745-ի, որը 17%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկն աջակցում է իր աշխատակիցներին ոլորտում մասնագիտանալու և հմտություններ ձեռք բերելու հարցում: Բանկի յուրաքանչյուր ստորաբաժանում ունի անձնակազմի ուսուցման գծով պատասխանատու, ով կազմակերպում է վերապատրաստումներ տվյալ ստորաբաժանման, ինչպես նաև մասնաճյուղերի աշխատակիցների համար: Կազմակերպությունն օգտվում է նաև ինստիտուցիոնալ վերապատրաստում իրականացնող ընկերությունների ծառայություններից:

Բանկում գործում է Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգը, որը՝ ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր հաստիքի համար նախատեսում է լրավճար, պարգևավճար և հաստիքավճար: Միևնույն ժամանակ, Բանկում նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո շարունակում է ամրապնդել իր տեղը բանկային համակարգում: 2022 թ. զուտ շահույթի մեծությամբ բանկերի շարքում Ընկորությունը զբաղեցրել է 13-րդ հորիզոնականը ՝ 5,9 մլրդ դրամով՝ 2021 թվականի նկատմամբ աճելով 1.2 անգամ կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով: Շահույթի էական աճով աչքի են ընկնում Արդշինբանկը (62.2 մլրդ կամ 356%), Ամերիաբանկը (44.2 մլրդ կամ 128%), Էվոկաբանկը (25.7 մլրդ կամ 2180%), Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը (22.7 մլրդ կամ 132%), ինչպես նաև Ինեկոբանկը (23.6 մլրդ կամ 163%):

Հաշվետու ժամանակահատվածում Բանկը շարունակել է դրական աճ գրանցել. Բանկի ակտիվները 62 մլրդ-ից աճել են մինչև 68,3 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով մոտ 10 % աճ: Տեսակարար կշիռը բանկային համակարգում 0,8 % է:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի ցուցանիշով Բանկը բանկերի շարքում զբաղեցնում է 15-րդ հորիզոնականը՝ 56.4 մլրդ ՀՀ դրամ ծավալով և մոտ 1.4% տեսակարար կշռով, բանկերի վարկային պորտֆելի միջին մեծությունը կազմել է 229 մլրդ ՀՀ դրամ, ինչը մոտ 4 անգամ գերազանցում է Բանկի վարկային պորտֆելի մեծությանը: Բանկի վարկային պորտֆելն աճել է 7.8 % ով կամ մոտ 4 մլրդ ՀՀ դրամով: Շուկայում առաջատարներն են Ամերիաբանկը (735.5 մլրդ ՀՀ դրամ կամ 17.9 %), Արդշինբանկը (531 մլրդ ՀՀ դրամ կամ 12.9 %), Հայբիզնեսբանկը (500 մլրդ ՀՀ դրամ կամ 12.1 %) և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը (408 մլրդ ՀՀ դրամ կամ 9.9 %), որոնք միասին զբաղեցնում են շուկայի կեսից ավելին (52.8 %): Վարկային պորտֆելի էական անկում է գրանցվել ՎՏԲ Հայաստան բանկում. 31.12.2022թ. դրությամբ 31.12.2021թ.-ի համեմատ վարկային պորտֆելը կրճատվել է 53 մլրդ ՀՀ դրամով կամ 25 %-ով:

Բանկը 2020թ.-ից գրանցել է կայուն աճ՝ 2022թ.-ին ակտիվների շահութաբերության ցուցանիշը հասցնելով 9 %-ի, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշով բանկային համակարգում զբաղեցրել է 9-րդ հորիզոնականը ՝ 16.66 %-ով: Այս շրջանում շահութաբերության մակարդակի էական աճը մեծապես պայմանավորված է արտարժութային գործառնությունների արդյունքում ստացված եկամտի մեծ ծավալներով:

Կապիտալի եկամտաբերության ցուցանիշով առաջին եռյակում գտնվող բանկերն են Էվոկաբանկը՝ մոտ 54 %, այնուհետև Արդշինբանկը և Ինեկոբանկը՝ համապատասխանաբար 50.66 % և 34.9 % ցուցանիշներով:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն ստանալով բանկային գործունեության լիցենզիա պահպանել է իր մրցակցային առավելությունները.

- ✓ Տոկոսային և ոչ տոկոսային բարձր եկամուտների գեներացման կարողություններ (արտահայտված տարբեր ցուցանիշներով, ինչպիսին է գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությունը):Հաշվետու ժամանակահատվածի համար ակտիվների օգտագործման գործակիցը (AU) կազմել է 19,3% :
- ✓ Կապիտալիզացիայի բավականին բարձր մակարդակ. 31.12.22թ.-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 56 %:

Բանկային համակարգի վերլուծությունը և Բանկի դիրքի գնահատումը ցույց են տալիս, որ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն ունի հսկայական ներուժ նախատեսված աշխատանքներն արդյունավետ իրականացնելու տեսանկյունից:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Առաջիկա տարիների համար Բանկը կանխատեսում է ապահովել կայուն աճ իր հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով, նորարարական, հարմարավետ և «խելացի» լուծումներով: Բանկի երկարաժամկետ տեսլականի մեջ է մտնում մուտքը աշխարհի առաջատար շուկաներ՝ դառնալով թվային բանկ, մշտապես կատարելագործելով գործունեությունը և հաճախորդներին մատուցելով ժամանակի պահանջներին համահունչ ֆինանսական ծառայություններ:

Ակտիվների աճը կզուգակցվի վարկային պորտֆելի շարունական աճով, որի նպատակով էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ պորտֆելի կառուցվածքի փոփոխության մասով: Ուժեղացվել է համագործակցությունը KFW-ի և համանման այլ ծրագրերի հետ, որոնք հնարավորություն կտան ներդնել վարկավորման և համագործակցության նոր մշակույթ: Դառնալով Բանկ՝ ընկերությունը փորձում է էլ ավելի կատարելագործել մատուցվող ծառայությունները, ինչպիսիք են օրինակ արժեթղթերի շուկայում բրոքերային և հաճախորդների ակտիվների կառավարման ծառայությունների մատուցումը: Ներդրումային ծառայությունների մատուցման

զարգացումը խթանելու նպատակով Բանկը ջանք չի խնայում, որպեսզի իր հաճախորդներին ապահովի արժեթղթերի շուկայում արագ և ճշգրիտ գործարքների իրականացման հնարավորություններով, միևնույն ժամանակ արժեթղթերի շուկայում ակտիվություն դրսևորելու նպատակով Բանկը իրականացնում է դրամային և դոլարային պարտատոմսերի թողարկումներ:

Ներկայումս նորագույն տեխնոլոգիաների մեծ թափով զարգացումը, դրա արդյունքում հաճախորդների պահանջմունքների փոփոխությունը նույնպես հանգում են Բանկի տեսլականին՝ լինել թվային բանկ, որին հասնելու համար իրականացվում են մի շարք թվայնացման գործընթացներ: Բանկը նախատեսում է Mobile Bank արագ, հարմարավետ և անվտանգ, նորարար լուծումներով հագեցած հավելվածի մուտք շուկա մի քանի փուլերով:

Բանկն աշխատում է շուրջօրյա՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցելով բանկային գործունեությանը բնորոշ պրոդուկտներ և ծառայություններ, ինչը հաճախորդների համար ավելի հասանելի և հարմարավետ է դարձնում Բանկի ծառայություններից օգտվելը:

Բանկը նախատեսում է ձևավորել հաճախորդի պահանջմունքները լավագույնս բավարարող քարտեր, անդամակցել Apple pay և Google pay համակարգին:

Բացի վերոնշյալից բանկը նաև նախատեսում է ընդլայնել իր գործունեությունը, և այժմ տարվում են աշխատանքներ նոր մասնաճյուղերի բացման և վերազինման ուղղությամբ: 31.12.2022թ. դրությամբ Բանկն ունեցել է 29 մասնաճյուղ, իսկ նոր մասնաճյուղերի բացումը հաճախորդներին հնարավորություն կտա ավելի հասանելի և հարմարավետ ձևով օգտվել առաջարկվող ծառայություններից:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բանկի գործունեության բնույթը ցույց է տալիս, որ այն առնչվում է ռիսկերի լայն շրջանակի հետ: Պորտֆելի կառուցվածքից պարզ է դառնում, որ ներկայումս Բանկի

գործունեությանը ներհատուկ հիմնական ռիսկերը շուկայական և վարկային ռիսկերն են:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկի խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ դասակարգման չափանիշների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) կշիռը ամբողջ բալանսային պորտֆելի մեջ 2022թ. վերջի դրությամբ կազմել է 23.2%, որոնց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով:

Բանկի վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Շարունակվում են համապատասխան միջոցառումներ իրականացվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման՝ այդ թվում ներքին սքորինգային համակարգերի ինտեգրման միջոցով:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկի գործունեությանը ներհատուկ հիմնական շուկայական ռիսկերը արտարժութի, տոկոսադրույքի և գնային ռիսկերն են:

Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելը 30.06.2023թ դրությամբ կազմում է 5,6 մլրդ դրամ, որի ձևափոխված դյուրացիան՝ 5,12:

Բանկի արտարժութային դիրքերը 30.06.2023թ-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	-0.2%
EUR	0.7%
RUB	0.6%
Այլ	0.1%

2022թ. արձանագրվել է գնաճի աճի տեմպի նվազում, ինչի հետևանքով ՀՀ ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 10.75%: :

2022թ. ընթացքում պետական պարտատոմսերի եկամտաբերության կորը ամբողջ երկայնքով աճել է՝ կարճաժամկետ հատվածը մինչև 3.2 տոկոսային կետ, երկարաժամկետ հատվածը մինչև 1.8 տոկոսային կետ:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը 2022 թվականի ընթացքում պահպանել է գրեթե նույն մակարդակը: Կազմակերպությունը տարեվերջին ունեցել է կարճ դոլարային դիրք, որը ամբողջությամբ գտնվել է կառավարելի մակարդակում: Եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը ևս կառավարելի մակարդակում են եղել:

Բանկի վարկային պորտֆելում գերակշիռ մաս են զբաղեցնում ոսկու գրավով տրամադրված վարկերը: Ներդրված է խնդրահարույց վարկերի գրավի բռնագանձման և վաճառքի բավական արդյունավետ գործընթաց, որի շնորհիվ ոսկու գների փոփոխությամբ պայմանավորված գնային ռիսկը հնարավորինս նվազեցվում է:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2022թ.-ին Բանկը իր գործունեությունը ծավալել է՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ: Բանկում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի համադրումից երևում է, որ պարտավորությունները հիմնականում միջնաժամկետ և երկարաժամկետ են, որոնք տեղաբաշխված են կարճաժամկետ և արագ իրացվելի թանկարժեք իրերի գրավով վարկերի տեսքով: Ավանդային բազան դեռևս շատ փոքր կշիռ ունի ընդհանուր պարտավորությունների մեջ: Բացի այդ, նախորդ տարիների փորձը ցույց է տալիս՝ սեփականատերերից ներգրավված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները նույնպես վերաձևակերպվել են փոխառության, հետևաբար քիչ հավանական է համարվում դրանց վաղաժամկետ մարումը:

Բանկը 2022թ. ընթացքում սահմանված ժամկետներում իրականացրել է իր բոլոր վճարումները պարտավորությունների մասով՝ այդ թվում իր կողմից թողարկած կորպորատիվ պարտատոմսերի արժեկտրոնները:

Բանկի իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Բանկի ցուցանիշները 30.06.2023թ.-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	**18 %**
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	242.5 %

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են գործընթացների արդյունավետ մշտադիտարկումը և կառավարումը, իրավասությունների և պարտականությունների հստակ ձևակերպումը և բաժանումը, ռիսկերի հայտնաբերման, ուսումնասիրման և զսպման ուղղությամբ տարվող պարբերական աշխատանքները:

Բանկը ապահովում է կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման, հաշվետվողականության և վերահսկողության ներքին հսկողության համալիր համակարգ՝ ապահովելով Բանկում ակտիվների պահպանումը, գործունեության անընդհատությունը, ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտումը ու կառավարումը, ինչպես նաև գործունեության համապատասխանության ապահովումը գործող օրենսդրությանը և Բանկում ներքին իրավական ակտերին:

Բանկում առկա են Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանումներ, որոնց գործառույթներից է նաև ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացումը:

Ներքին դիտարկումների պատասխանատուն իրականացնում է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ ուղղված գործառույթներ, ինչի շրջանակներում դիտարկվում են ընկերությունում կատարված գործարքները, բացահայտվում են հնարավոր ՓԼԱՖ ռիսկերը, և դրանց վերաբերյալ Բանկի խորհրդին և լիազոր մարմնին ներկայացվում են հաշվետվություններ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով: